

Կը վագէ ան , որայասանիկէ՝ խելայեղ ,  
Ասելուրիւնն իր ատին մէջ դրած բոյն .  
Ու կը պառկի , ինչպիս զոհք , ամէն հեղ  
Ըզդաղով նոյն դառնուրիւնը , ոխը նոյն :

Օր մ'աշ , շատ շուտ , կը սիրէ ան՝ զերդ գերի .

Կերազէ վերջն իր անկուսին ցաւազար :  
Յամափի պատրանի . . . : Այդ կեանիք վա՛ղ կը  
փըշրի :  
Եւ բացող մը խեղճն իր ետին յունեեար :

ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶԵԱՆ



## Հերման Եւ Դորոթէա

(Քննադատական փորձ)

~~~~~

Վերջերս լոյս տեսաւ Գեօթէի «Հերման Եւ  
Եւ Դորոթէա» այլ<sup>1</sup> չափածոյ հայերէն թարգմա-  
նութիւնը . այս առթիւ արժէր մի քանի խօսք  
ասել այդ երկի նախ զրական արժանիքների ,  
ապա հայ թարգմանութեան մասին :

1796-ի սեպտ. 6-ին Գեօթէն սկսաւ իւր այս  
գործը շարադրել . ութին օր յետոյ կէսից աւելին  
արդէն գրել էր . իսկ յաջորդ թուականի յունիս  
3-ին աւարտեց ամբողջովին : Խնչպէս տեսնում  
ենք նա զարմանալի արագութեամբ է ստեղծել  
ինս երգից բաղկացած այդ պօէման , որը գրե-  
լիս ժամանակակից երեւելի անձանց խորդին  
էր դիմում յատելի եւ նորանոր փոփոխութիւն-  
ներ մասնութ , մինչեւ որ խսանա համազուեցաւ ,  
որ ոչինչ այլ եւս չունէր փոփոխելու : Նրան  
խորհուատու անձանաւորութիւններից յիշատա-  
կութեան արժմակի է ազնւաւարու Շելլերը  
մանաւանդ . սղա մօսն էր գնում Գեօթէն երե-  
կոները , կատորները կարգում , որպէս զի լսէր  
այդ մնեց բանաստեղծի հեղինակաւոր կարծիքն  
էլ : Շելլերը վաղուց արդէն իւր գնահատու-  
թիւնն արել էր , գրելով Մեյյեր նկարչին . թէ  
«Հերման եւ Դորոթէա»ս ոչ միայն Գեօթէի , այլ

եւ գերամանական ամբողջ նոր գրականութեան  
ամենաընտիր գործն է : Շիլլերը յայտնում էր  
նաև , թէ «Մինչդեռ մեզպէսները պէտք է եր-  
կար տքնին ո եւ է ողորմելի բան զրելու , Գեօ-  
թէն հերթիք է որ թիմիեւ շարժէ ծառը եւ ար-  
դէն կը թափուին ընափի պտուղներ , հասուն ,  
ծանրացած :

Ջր մոռնանք նաևւ , որ «Վելթելը»ի ու «Ֆա-  
ռուսակը հեղինակը , Գեօթէն ինքն էլ մինչեւ-  
ման ջերմ գորգուրանք էր ասծում գէպի այս  
պօէման , որի ընթերցումը յաճախ յուղում էր  
նրա ծերուունի կործքը : «Մեծ երկերից զրեթէ  
միակին է , ասում էլ մի օր եօթանասունը վեց  
տարեկան հանճարը իւր ընկեր էկկերամինն , որ  
դեռ շարունակում է բաւականութիւն պատճա-  
ռել ինձ :

Գեօթէն ծախեց իւր գործը Բերլինցիք մի հրա-  
տարակի 22,200 ֆրանկով , այդ ժամանակի  
համար ապշեցուցիչ մի գին , Գործը մնեց ընդու-  
նելութիւն գտաւ :

Իրաք արժանի՞ էր այդքան գնահատու-  
թեանց . դրա համար ամենից առաջ իմանանք  
«Հերման եւ Դորոթէա»ի բովանդակութիւնը :

Հոենսափից ոչ հեռու , խազակ , բարեբասափիկ  
ապրում է գաւառացի սակաւանքամ մի ընտա-  
նիք : Փորձառու եւ խիստ հայրը բարի կոնյը  
հետ պահում է պանդոկ , որի յետեւը արած-  
ուած է նրանց պարտէ զն ու հասուն արտերը :  
Նրանց երիտասարդ որդին Հերմանն էլ անձնուե-  
րաբար պահպանում է կալուածները , եւ , հա-  
կառակ իւր ծնողների թախանձանքին , զեռ չի  
էլ մտածում ամուսնանալու մասին :

Մինչ արդ՝ 1793-ի քաղաքական գէպերը

վրդովում են Հռենոսի եզերքի բնակիչներին . գետի ձախ ափին ապրող Գերմանացիք, մշուելով մրանացիներից, ստիպում են զաղթել զէպի աջ ափը, Հերմաննեց կողմերը ։ Թշուառ զաղթականներն ամբան տասկերին ցրու ած են շրջակաբը . Մեր գառառական քաղաքի միաւ պաղաղ անդրբութիւնը խանգարող զէպք էր այս, շտերը, կարիկացար կամհետաքրքրուած, վազում են տեսնելու պանդուխոնիր տարարադ չուն . իսկ պանդոկասեան իւր կնօջ նետ նատած է դռանը, խօսում են օդերի, հռոմնձրի եւ զաղթականների մասին : Ծերմանին ափսուասնով է զիշանում, որ իւր կին վերակուն, բաճկոնը եւ այլ լաթեր կինը տուել է Հերմանին, որ սա տանի, ցրու կարօսեալ տարսով գիրներին . ինչ որ է, « ողորմելու հարասին զորն է » ամելով կը միթթարուի, նա էլ կ'ուզեր գաղթականներին տեսնելու գնալ, եթէ դանդաղաշարժ չը լինէր, իսկ օդերն էլ՝ շոր, Բայց ահա գեղագործ գրացին ու քահանան զալիս են տարագետանների մօսից . Կորոնց ներս կը հրաւիրին, մի մի թա հռենոսեան կին զինի կը խմնն եւ . մանրամասն լուրեր կ'առնին, Մինչդու Հերմանն իրենց փայլուն կառքին լիած է Նժոյցները, հետո առել է կին լաթեր ու պաշար եւ գնացի բաժանելու իւղին գաղթականներին : Նա պատահում է գաղթական աղիկ Դորոթէային, ինչ սիրուն է նա, փայտ ձեւագիրն վարում է նա եղիացարը սայլը, որի մէջ յարդի վրայ պառկած է հազու աղատուած, ծննդական մի կին, տկլոր նորածնին գրկած : Աղջիկը համարձակ, բայց համեստ մատենում է Հերմանին եւ ինդրում թէ՝ նա չէ՞ր կարող արդեօք իրենց օգնել ո եւ է լաթերէնով, թէ՝ ինքը կամաւոր եւ անսէլքունչ սպասուի է, որ տեսնելով հիւանդի մաօգնական վիճակը, յօֆառութեամբ յանձն է առել ծառայիլ նրան :

Հերմանը սիրով տալիս է ոչ միայն ինչ որ ննդականին էր պէտք, այլ եւ բերած բոլոր պարէնը, որպէս զի գաղթականներին լաւ ծանօթ եղող այց աղջիկը բաժանէ անձամբ : Ու պատանին սիրավառ յետ է դառնուում զէպք տուն, ուր գեռ նստած են քահանան, գեղագործն ու ծնողները . իսկացի քահանան իսկոյն նշմարում է, որ Հերմանն այլայլուած է . սա

պատմում է, թէ ո՛ւմ բաժնեց լաթերն ու պարէնը, թէ ո՛նց ուրախացաւ ծննդականը, թէ ի՞նչ ախուր կացութեան մէջ են զաղթականները :

Դեղագործը, որ թոյլ ու հսասէր մարդ է, վրայ է բերում, թէ գոն է ինքը, որ ամուրի է, նեշտութեամբ կարող կը լինի գլուխն ազատել, երբ կարիքն ստիպէ : Հերմանը պերծօրէն ներքում է նրա կածիշը, ասելով թէ՝ նեղ օրիքին մարդ շատ աւելի կարիք ունի ընկերի, եւ այժմ աւելի քան երբէք կ'ուղէր ամուռնաւան ինքը : Ծնողները գովում են նրան, որ վերջապէս ցանկութիւն է յայսում պասկուելու . Կայը վերջացնում է խօսքը առաջարկելով կրկին . « — Հերման, չուուով ընարիր հարուսա գրացու աղջիկներից մէկին, քեզ նման իրիսասարք հարուսա աղջկայ է արձանի, արշանկ հարանցած ընարիլու չէ, աղջաս հարսի հետ կը վարուին ինչպէս աղախին հետ : »

Հասկանալիք է, թէ ի՞նչ զրամայ է ձեզում այս կէտիք . Հերմանն առում է մծասուն հարեւանի հպարտ աղջիկներին, եւ ընդհակառակը սիրում է Դորոթէային, բայց սա էլ աղքատ է, ուրեմն հօրը տհան : Առանց ասելով, թէ սիրում է Դորոթէային, նա թախանում է որ երբէք չի կարող միգել զրկիցի աղջիկներից եւ ոչ մէշկն, եւ սրայոյց մօտենում է գռանը . իսկ Կայը բարկացած նրա յամառութեան վրայ, « Աչքից հետացիք » ասելով, աւարտում է խօսքը, ինքնարերաբար աւելացնելով նաև, որ չը լինի երբ եւ իցէ համարձակուի ո եւ է գեղջուկ հարսնացու ընտրել : Որդին յուսաբեկ հետանում է տիկից . իսկ պանդոկապեալը, քահանան ու գեղագործը շարունակում են խօսակցիլ նոր կարգերի ու երիտասարդութեան մասին :

Մինչ այդ, մայրը դուր է շտապում, որունելու իւր անպարտ որդուն, նախապէս յանդիմաննելով հօրը, որ միշտ ի զուր տեղը նախառում է որդուն : Երկար փնտուելուց յետոյ, գնում է մօտակայ բլուրը . ծերունի տանձենուտ տակ, արցունին աշքին՝ Հերմանը նստած է այնտեղ և նայում է Հալենոսի կողմէր Մայրը զարմացած ահմանում է որդու լացը եւ լսում է, որ Դորոթէային սիրում է, եւ եթէ չամուռնանայ նրա հետ ամուրի կը մնայի, Մայրը սիրտ է տախի որդուն, նրա ձեռքից բռնած վերագանում

է տուն, որպէս զի օգտուելով զըացիների ներկայութիւնից, ջանայ նրանց հետ՝ առնել հօրկամքը, ինքը համարմիտ է: Վերջապէս հայրը համաձայնում է պայմանով, որ քահանան ու դեղագործը հաճին երթալ անձամբ տեսնել աղջկան, նրա մասին տեղիկութիւններ հաւաքեն, եւ, եթէ նպաստաւոր կը լինի ամէն ինչ, ապա Դարորժէային ընտքեն հարսնացու: Հերմանն ուրախ լուսմ է կտորը, մէջը նստում են զրիցիները, եւ առաջնորդում է նրանց զէպի զալթականները: Այնուեղ ասուերափախտ ծառերի տակ կանագնեցնում է կառըը, քահանային եւ զեղագործին նկարագրաւմ է աղջկան արտօվինը, որպէս զի կետութեամբ գտնեն ամրովին մէջ: Խնդրում է նաև, որ Դորոթէային լը յայնին իրենց միտքը, այլ միայն տեղեկութիւններ բաղեն առինչերից նրան մասին եւ վերադառնան, այդ սառերում նրանց կ'սարսէ ինքը:

Երկու խորագրկունները ցրուած ամրոիդի մէջ պատահում են զալթականների երէցինա առ իւր պատկանելի արտաքինունաւ խելքութիւնցնում է իրարշէլին անապատում պայմանորդող նախահարդերին: Այդ ժերանին խոնուն գատողութեամբ խօսում է Գրանսահան յեղափօխութեան եւ զբա Գերմանիայում տարածած լուսամիտ գաղափարների մասին: անայտաօրէն քննագատում է նաև այդ յեղափօխութեան չափազանցուները, զգում է իրենց գարի մած արժէքը: Նա պատահում է նաև մի աղջկան մասին, որը բիրու թշնամիների զէմ սուրբ ձեռաքն պաշտպանել է տաքնապի այս վերջին օրերին իւր եւ իւր ընկերունների պատիւը: Դորոթէան է այդ աղջկիը, որին անձամբ տեսնելուց, նրա մասին գրվեսաններ լսելուց յետոյ, քահանան ու զեղագործը վերագանում են Հերմանի մօտ: վերջինս այժմ մի այլ մորքը է տանջում — ըստ ինի Դորոթէան մերէէ իւր ձեռքը, աղջառա հապար է երեւում այդ աղջկիը, կամ գուցէ նշանուած է արգէն: Հերմանը քահանային ու զեղագործին կառը է նասեցնում, որ երթան խնդիրը յայնին ծնողներին: խկինքը մենակ զնում է Դորոթէայի կամքն առնելուց ներկու սափոր ձեռքերում, նազկիլ օրիորդը վժիս աղջիւրի մօտն է: Ուրախ բարեւում են իրար, միմանց պատկեր զիտում են աղջիւր հայելու մէջ անդրադասած, բաց, աւա՛զ,

պատանին նշմարում է Դորոթէայի մատանին և Աղջիկը սիրով յանձն է առնուած այն տառաջարակը, որով նրան հրաւիրում է Հերմանն իրենց տունը, իրը աղափին: զես չի համարձակուում յայնելի իսկական նպաստավոր Ապա նրանք միասին գնում են նեստ բարով ասում ծննդականնին, որն արգէն գոտել էր կորցրած իւրացիններին եւ այլ եւս կարիք չունէր Դորոթէային:

Վերջարդյուն է: մեր զոյզո ճամբար է ընկուտմ հետիւնն, զէպի Հերմաննենց տունը: ճանապարհին հանգչելու համար նստում են այն անձեւունու տակ, ուր Հերմաննը քիչ առաջ նստում էր արտում: լուսնկայ գիշեր է, երկումն էլ արդատարոփ դիտում են պտղառան լրջակայքը: Հեռաւում պարզ տեսնառում է Հերմաննենց տունը, պատանին ցոյց է տալիս իւր սենեկակի պատուհանը եւ առում, որ թերեւու այդ սենեկակը դառնայ նաեւ Դորոթէայինը, բայց իսկորու ծածկելու համար այդ ակնարկը, նա աւելացնում է, թէ տանը փոփոխութիւններ են անում, թերեւու աղափին համար յանկացուք այդ սենեկակը լուսնկըն ծածկում է մըրկագոյժ ամպերի տակ, մաւթը պատում է: ոտի են կանգնուում եւ խարխափիկը ինուու պարակէզն ի վայր: յանկարծ աղջիկը սայթաբռում է յաղան գրիուում է նրան եւ ընկնելուց ազատամի, պատեղ աւելու աւելի ուժուած է ուղան գրիուում է նրան թէ Հերմանի ծնողները նրանց սուրբ բարձր աղջիկը կատակի տալու ասում է, թէ չարագոյժ նշան է տուն մտնելուց առաջ սայթափիկը, թէ Հերմանի ծնողները նրան կը պարասաւն, որ կազ աղափին է թերեւ, ոտը քիչ ցաւում է սայթաբռումից: Փոթորիկը սաստկանում է: Մնանդինը տանը շատ անհանգիստ են, որ այդ վտանգաւոր ժամին Հերմանը գետ չէ վերադրձել: յանկարծ բարձրահասակ զոյզը, չկշնած, թեւ թեւի ներս են վնասում սենեկակի փոքր գոնից: ինչ զսեմ պատկեր: Զայր ծաղրական սրախօսութեամբ նրանց վիմաւորում է, զրկիցներն էլ զես այնուեղ են: իսկ աղջիկն երբ լսում է, որ իրեն իրը հարմանցու են ըերեւ, կարծում է, թէ ծաղրաւմ են իւր աղջառատութիւնը, վիրաւորուած լալիս է եւ ուզում իսկոյն հետունակ կրկնին իւր հին ծառայանեղին, թէկուզ զիշեր վննէր, թէկուզ փոթորիկը գուուր: Միջամտում են բոլորը, նա համոզում է որ իրաք հարմանցու են ընտրել իրեն: Քանիւ

նան նշանտուէքի մատանին ուրախ ուզում է անցնել նրա մատը, բայց նկատում է, որ մի այլ մատանի էլ ունի աղջիկը մատին։ Դորոթէան հեծկոտոցը պատմում է, որ մի մադամ արգէն նշանուած է եղել, բայց նշանածը մնաել է յեղափոխական աղմուկներում, Փարիզի բանտերում, եւ իրեն իբաւունք տուել ամուսնանաւուում։ Իսկոյն Հերմանը դիմում է աղջրկան, թէ ինքն էլ պատրաստ է կարիքի պահին դիմուիլ հայրենիքին համար եւ կը փոխարինէ երջանկայիշատակ նշանածի կորուսոր։ Հէնց իսկոյն կատարում են նշանտուէքը, եւ տեսարանը փակւում է։

Այս միեւնոյն պատմուածքի գլխաւոր գծերը գտնուում էին արդէն Զալցբուրգի բողոքական դաշտականների մասին խօսող մի պատմազրութեան մէջ։ տարբերութիւնն այն է որ Գեօթէն աւելացրել էր մի նոր անձնաւորութիւն էլ Հերմանի մայրը։ գէպքի տարբերիւն էլ փոխարդում է 1732-ից 1794, որով ոչ թէ կրօնական հալածանքների զոհեր են զալցտականները, այլ բաղաքական նշուունների զոհեր։ րօնական ինդիրը մնեց շարժափիթ լինելոց ընկնում էր, Գոլթերն էր ապել այդ դարում բացի այս եթէ Դորոթէան բողոքական տարագիր լիներ, Գերմանիոյ կաթոլինները չը պիտի սիրէին նրան։ Վերջապէս Գեօթէն զգացել է, որ հայրենամիտութիւնը շատ աւելի յարատել է, քան կրօնեալ աղջրերից զատ։

Վերջիշեալ աղջրերից զատ, կայ եւ մի այլ շարժափիթ, որը գրել է Գեօթէին գրել իւր տօչման։ Ֆօս անտէմ մը Դերմանացի, որ գեղիքի թարգմանել էր Հոմեռոսը, Գեօթէից առաջ գրել էր «Լուփա» անուն մի հովուերգութիւն։ այդ գիրը լւա ընդունելութիւն գտաւ։ գերմանական գաւառային կենացը մանրամասն նկարուած էր քրա մէջ։ Գեօթէն կարդացել էր այդ գիրը, եւ լոկ մի քանի նուրբ գծեր վերցրել — պանդկապետի վերաբերուն, նրա կարմիր երկով գևեարլը։ Վերջապէս եթէ ֆօսն առում էր, թէ նեղութիւնները նոյնպէս օգտակար են մարդուն, Գեօթէն էլ յայտնում է է, թէ գերազութիւններից երջանկութիւններ են ծնւռում։ Խնչպէս անսում ենք, շատ չնչին հետեւողութիւններ են սրանք, բայց Գեօթէն

իրօք ուշիմորէն վերլուծել է Ֆօսիք գործը, գտնել նրա թէրի կողմէրը, եւ իթէ կար մի զիծ որին հետեւելու էր, այդ էլ մօսի ընտրած նպատակն էր, բայց ոչ այդ նպատակին հասնելու կերպերը, այն է՝ գրել քաղաքացիական հովուերգութիւն։ ահա թէ ինչո՞ւ երբ «Լուփա» յի երկրորդ տպագրութիւնը լոյս տեսաւ, Գեօթէն գրեց Ծիւմերին, թէ ինչքն էլ այդ տեսակի մի պօչման պիտի գրէ։ Յանկութիւնը յղացել էր, մոտում էր նիւթ գտնելը։ իսկ այդ էլ երբ եղաւ, ապա, ինչպէս ասել են գեղեցիկ կերպավ, աշակերտը վարպետիցն անցաւ իւր թոքչով, ինչպէս արծիւն անցնում է արուոյալից։

Բայց ո Հերման եւ Դորոթէա յի մէջ նըշմարւում են այլ հետեւեր եւս։ Գեօթէն վաղուց սպանչանում էր Հոմեռոսի վրայ, գիտենք, որ մելանոյշ Վերթերը մրմիջուում էր, թէ «Օրորեկպերի պէտք ունիմ եւ առատօրէն զանում եմ Հոմեռոսի մէջ», որը ծառերի ստուերում կարպակին նրա յուզուած արինը հանդարսու ում էր, եւ երբ կարդում ենք, թէ «ո՞նց Հերմանը լծում է Կառքին բրդիկերախ նժոյնները, յաշամայից մտաբերում ենք Հոմեռոսի նմանօրինակ տողերը»։ Բայց անցել էին զիւցադնական դարերը, տասնեւեռթիերոդ զարն այլ եւս չէր հաւատում Մաքիլեսին, թէ եւ դանով գործի արմէքը չէր ընկնում։ Հոմեռոսի ոճն ու արուեստին զիւցելիութիւնը միշտ էլ մնալու էր օրինակելի, ահա այս տեսակէտից ըմբռնելու է Գեօթէի հետեւողութիւնը։ Փոխանակ հրաշալի առասպիններ պատմելու, պարզ կեանքի նկարագրի կ անէ, բայց Հոմեռոսի արուեստին մաքրութիւնը միշտ աշքին առջնի կունինայ։ «Իրական պէտք է ասենթէ պատճանն ու հետաւանները, իսկ բանաստեղին մնում է այդ բորոյից մը ամբողջութիւն կազմել»։ ասում էր նա ։ Ահա թէ ինչո՞ւ Գեօթէն ուսուումափրում էր ծողովրդի ամենաստորին խաւերը։ յայտնի է, որ այդ համաձարը գիւղացիների հետ գործել է մինչև իսկ կողովներ։ իսկ այս բոլորին էլ աւելացնենք, որ մնեց բանաստեղին այդ ժամանակ սկսել էր մտածել ընտանեկան օջախ կազմելու մասին։ միւս կողմէց էլ յիշենք, որ, տասնեւեռթիերոդ գարի վերլորը մանաւանդ, բոլորը մատանձն համակրանք էին ցոյց տա-

վես գէպի այն ամէնը, որ ժողովրդի կենցաղաւ կանին էր վերաբերում, բնութեան մօտ եղող կեանքին էր պատկանում, ապա հասկանալի կը լինի, թէ ինչո՞ւ այնչափ ուրախացաւ Գեօթէն երր գոտաւ « Հերման եւ Դորթէչայի » նախնական սաղմօր մի ինչ որ պատմագրութեան մէջ :

Կառնէ զլիաւոր գծերը, որ այնպէս ձկուն են, կ աւելացնէ նոր եւ ամրողացնող մասեր՝ եւ կ ստեղծէ մի պօչմա: Վարպետների վարպետ Հոմերոսը գրել է հիմական, որի մէջ սէրը, կոփուր, փառքը, աստուածայիշը, մարդկայինը ուրիշ խօսքով՝ ամբողջ դիւցազնական գարը քանակուած է: լաւ: Գեօթէն էլ իւր գորը կ'արձանագրէ այդ փոքրիկ հատորում, որպէս զի վէպի գոյն ստանայ: Նթէ Հոմերոսը Տրովայի պարսպաններ է հեռանկար շինե, նա էլ իւր պատկերի երկնքը շատագունել կուտայ ֆրանական յեղափոխութեան բոցերովը: այս պիտօն այնչափ կը վսեմանա պատկերը, որ բոլորին էլ կարող կը լինի հետաքրքրել:

Գերմանացիք, նոյն իսկ « Վերթեր » նազելի հերոսունին, կը սիրեն այս գիրը, քանի որ դրա մէջ շրջապահ առօրեայ կեսանքը կը կարդան այնպէս արտիստօրէն գծուած, Հունոսիք ափերը, սեղական հաւատավիքներով, Տևերէ, երբ Դորթէչան Հերմանին հետ միասին ուզում է մասս բարով ասել ծննդականին, երեխաները նրան փաթաթւում են եւ չեն ուզում որ հեռանայ իրենց սիրելի աղախինը. ներկայ եղող կանայք համոզում են երեխաներին, թէ՛ Դորթէչան գնում է երեխուու այն շաբարհացը, որ նորածին մանուկը պատուիիք էր պատրաստել հացագործին, երբ արագիլը այդ նորածինին գրկան բերում էր: Դեռ ցար էլ Գերմանիայ յում հաւատացնում են հետաքրքրուող երեխաներին թէ արագիլն է, որ բերում է նորածիններին:

Սակայն միայն Հունոսի շուրջը չէ կաշկանդում այդ գրքի մէջ գործող անձանց զարգեցնող հարցը, այլ ընդանուոր ազգային հարց է դա: Ամբողջ Գերմանիայ շահերը սունակուն էին եղած ֆրանսական արցաւանքներով. բոլոր Գերմանացիք, նոյն իսկ ամենազատամիտները, կը յուզուէին այդ ինդորով, անիշէալ Հերմանն անգամ բացագանցում է, սիրով վերածնուած, թէ, « Եղան թշնամին մօտեղել է Հունոսին, գետ

Գերմանացին կարողանում է տանը նստել անգործ » :

Ազգային լինելն էլ հերիք չէր: Գեօթէն կամաց կամաց լայնացնում է իւր պօչմայի սահմանը. Հերմանը գնում է օգնելու գաղթականներին, որոնք ամրան տապերին ցրուած են շրջակայթում. իմ հոգին այդ սրատուոչ տեսարանի թելազորութեամբ գոնէ մի վայրիկնան թափառում է մեր հայրենի աւելակների չորսպին. անա մեր Տաճկանայ տարապիրներն էլ ցրուած Արաբատեան դաշտում, Մայր Արաքսի ափերին. մեր Խուսահայերը նրանց օգնում են եղացրաբար. մի Հերման էլ մեղանում տեսնում է թերեւու Տաճկանայ սեւաչ մի տղիկի, սիրում է նրան եւ ձեռքը խնդրում. վերջապէս խնդիրն այն է, որ մի նոր գիծ եւս. ուրեմն բացի Գերմանացուց ուրիշն էլ է հետաքրքրում այդ գիրը. լիմի թշնառութեան, զթարտութեան, սիրոյ կամ հանրապետական այլ գաղափարին նուիրուած մի էջ, խնդիրն այն է, որ « Հերման եւ Դորթէչայի » մէջ բոլորին հետաքրքրող կէտեր են կան :

Այսկամով այս պատկերը, որ ամիզը է առնում գաւառական ընտանիքի պարդ յարկից, հետզետէս անցնում է Հունոսուն էլ եւ համառու ուկեզօծ ու հեռաւոր հորիզոնը, ուր գիտ լրաւում են ֆրանսական յեղափոխութեան աւետաբեր ձայները, հաւատարութեան կանչը, ուրիշ խօսքով՝ Գեօթէն միաժամանակ ընդգրկում է եւ հայրենիքը, եւ իւր ամբողջ գարու երկունքը, եւ բոլոր մարդկանց: Զիւնապատ լեռների կասպարց գլորուել սկսող աննշան գնդակի պէս աստիճանաբար մնանառում է հարցը, որ ձեւն հաւաքենով գատնում է մի վիթխարդի հիւս եւ անազին ժխորով գահավիժուում է, իւր հետ տանելով ամէն ինչ, որ կը պատահի ճանապարհն, նոյն իսկ զարաւոր կազնեներն արմատավելի եղած, միափին արշաւում են յառաջ ։ Ժամանակակից ամենամեծ խորհուներն անգամ, լինէր մի Վոլթեր կամ Ռուս, բոլորն էլ ցրուցուել են յեղափոխութեան գոնէ հեռանկարովը Ակրոտիմ Հերմաննէ հայրը նասած է գանձը, խօսում է իւր կնոջն հետ օդերի եւ հունձքի մասին, մի քանի ժամ չանցած, թէշ հետո գաղթականների ալեղարդ երէցը, իբր մի նոր նեստոր, կանգնած է աղմկայոյզ արագելների

մէջ եւ ուշիմօրէն քննադատում է իւր գարբ ընկերական երկունքը :

Ահա « Հերման եւ Դորոթէա յցի անձայր պերսպեկտիվը , ահա « Հերման եւ Դորոթէա յցի անթառամելլութեան գաղտնիքը :

Միանգամ այդ հմայքը գտնելուց յետոց , գեօֆէն արգէն հնշութեամբ է կարողանում իշխել այս ընդարձակ ամբողջութեանը վրայ : Տիգիբը վերցնում է հէնց իրական ներկայաց ցուցիչներից , իրաքանչիրին տակիս է իւր դերին համեմատ արտաքին , բնաւորութիւն , շարժուածք եւ զարգացում : Այսից՝ Հերմանի հայրը յիշեցնում է հէնց բանաստեղծի հօրը — բանդաղաշարժ , խիստ , բայց աւելի խալազաւ մէր , նշապան , քիչ էլ միատ . սա էլ խորհրդի անդամ է ընտրուել , առ էլ յաճախ պարասաւում է իւր որուու ձևուամենքը , զգացմունքներն էլ շատ զերուն չեն :

Նրա կիր նոյնն է Կարծես , ինչ որ Գեորգի մայրն էր , թող թէ անունն էլ նոյնն է . սա էլ , բարի , անածեաչու ու խելօք :

Հերմանն պարտաճանաչ մի պատճենի է . ամբողջ իդէանն էր պահպանել արտերն ու այդին եւ ինամենք նժույչները , բայց աս իւր հօրն այն քան չի սփրում , որչափ որ նրանից պատկառում , իսկ մօրն՝ ընդհակառակը . զա առողջ մի գաւառացի է . զրդի՛ր նրան եւ նա կը գործէ . իսկ այդ դրդին էլ միայն սէրը կարող էր լինել :

Այժմ զանանք Դորոթէային . զա մի նոր ժան ա՛նքը է , ծնուած ու մնուած կենանքի աղուուկին մէջ . լինի զինուար կամ խազալ մշակ , լինի քաղաքացի կամ յնական , բլորն էլ նրան կը սիրահարուին , բոլորի հետ էլ վարուել զիւակ , հերիք է որ չար չը լինեն , այլապէս սուրը ձեռքին նա պատիւ . կը պաշտպանէ . անշուշչ , շատ իդէալացրած է Գեօրգէն այս գեղեցիկի գեղուկուած գծերը , բայց պէտք է չը մոռնալ , որ յերափիսութեան անքնական շրջանը շատ ընդունակ է այդպիսի տիպեր եթէ ոչ ստեղծելու , գտնէ երագլու :

Գերդի քահանան ատամութերորդ գարբ ու շմբ զաւակն է . թէեւ նշարթս քրիստոնեայ է , բայց Աստուծու եւ Քրիստոսի անունները կըրկնելու կարիք չի զգայ գրեթէ . Նրա Աստուծու ու ընութիւնը շատ էլ անչատ չեն . Ռուսօն

էր ապրել : Այս մարդը յիշեցնամ է Տիգիանի նկարած Քրիստոսին , երբ առ Հրեային պատասխանում է , թէ « Տուք զկայսերն կայսեր եւ զկատուածոյն Աստուծոյ » , հանգարտ , ներլացի եւ զուսպթ . բողոքականութիւնը առւել է նրան սքեմ , իսկ Գեօրգէն էլ՝ իւր միտքը :

Իսկ մէջ զծագրել ուզենք գաղթականների երկին , հերիք է աւենք , որ նա նմանելիս է եղել Խորայէլիս անապատում առաջնորդող նախահայրերին . անաշում է իւր գորն ամրողով վին . թափանցել վիտէ մարդկացին հոգու խորքը , և եթէ խօսի , վէճը կը վերջանայ . այդ աշեղարդ ծերունին , իրական միներովն էան դեր , կարծես լինի մի ալլաբանական մի արձան՝ « Պատմութիւն » — փորձառու , վեն ու անաշառաւ :

Ընկերութը նկատեց , երեսի , որ այդ ափերի մէջ , խոյոր հակագրութիւններ չկան , ինչպէս ուսմանթիկներն են անում — հրեշտակ կամ սատանայ . ո՛չ , ծիածանի գոյնների պէս , մմզմ ասփճաններով մմմանցից բաժանուում են նրա ափերը , եւ կամաց կամաց հնաանալով պարզում , թէ՝ կարմիր են կամ կապոյտ : Անշուշչ ունեն տարբեր գծեր , այլապէս զրաման չէր ծնուիք , բայց նրանց մէջ ծայրացի տարբերութիւններ ըլ կան . այդպէս չե՞ն մինենոյն պայմաններում ապրովները : Հստ իս և Հերման և Դորոթէայի ինքնուրուին զծերից մէկն է սաւ : Այդ չարգլուում ի հարկէ , որ քահանան աեւէի զարգացած լինի , քան ծիականները . այլ է կրթութիւնը , այլ է բնաւորութիւնը :

Ընկառողութիւնն այս կերպիցն է ծագում , որ նրա ափակերու լոկ չուրջ ու մոռայ չեն . այլ հոգու զուարթ ութիւնը բոլորի մէջ թափառուում է : Վերինիք մելամազձառութիւնը իսպաթափ է տուել իրենից Գեօրգէն եւ զգացել , կարծես , որ զուարթութիւնը վեմ նորու յատկանիւ է . ահա թէ ինչո՞ւ նորի իսկ ծանրախոն քահանան սրախօսում է . երբ սա նշանատէքի մատանին ուրախ անցնում է Դորոթէայի մատը եւ նշարում , որ աղջիկն արդէն ունի մի այլ մատանի , ասում է . « Ի՞նչ երկրորդ անգամ՝ ես նշանաւում . բայց , զգո՞յլ , կիս նշանածդ եկեղեցում չի յասնուուի ու արգիլէ պատկանութիւնը » : Մինչեւ այդ բոպէն քահանան տեղակ չէր , որ Դորոթէան ունեցած էր մի

այլ նշանած . հասկունալիք է ուրեմն , թէ այս երգիծնակը որչափ թախիթ է ծննդու և վաեւ- մացնելու արդարութ հարանացուի պատկերը , երբ սա հեծկուողով սկսէ պատմու , որ ին նշա- նածը մտնել է յեղափոխութեան աղմուկներում :

Գեօթէն , իբր մեծ վարպետ , շատ բար ըօ- բընել է , որ ձանձրափ կը լինի բոլորին էլ փիլիսոփային տալը , այս կէտք շուասութեալու համար է , որ գեղագործը ծիծաղաշարք է և նշյունութիւններով շատափասողը ի լիրոյն նկա- տենք նաեւ , որ բոլոր տիպերը գետագրում են իրենց գործերով և խօսեերով . Գեօթէն գրիթէ որանց յի նկարագրում յատկապէս , այլ նրանք իրենց արածներց պատկերացում են պարզ ու որոշ կերպով :

«Հերման և Դորոթէայի մէջ կայ մի այլ ուր- ագրաւ հանգամանց եւս , գործողութիւնը կա- տարում է մի քանի ժամեւայ ընթացքում , եւ չը մոռնանք , որ խօսքն ամուսնութեան մաքն է — մահու և կենաց ինդիք . հետութեամբ չի կարելի բարդովին անմանօթ մէկն ընտրել ու պայմուել հետո էնց անմիջապէս , բայց այդ մի քանի ժրութում Գեօթէն այնպէս լու զար- դացրել է ինդիքը , որ ոչ միայն անմասկան ու վասնդաւոր չէ , այլ նաև մի նոր պացցոյ է տուել իւր հանձարի մծութեանը :

Գայթակամանները մեկնելու են , Հերմանը կամ նոյն օրը կը պասկուի եւ կամ խսպա կը կորցնէ Դորոթէային . այս է նրա հասմեափ պատճառը : Այս՝ արդէն գայթակամների երե- ցը պատմում է Դորոթէայի ողջախն արու- թիւնը . երրորդ՝ երես վասնգի ժամանակ նա սրով պաշտամանը է իւր եւ իւր ընկերունենքի պատիւր , կամ կամու ծառայել է յանձն առել ճնշակամին , փոխանակ արագ փախչելու և իւր գույնն արամելու , ուրեմն Դորոթէան վաստանելիք աղջիկ է , նա՛ , որ այսափ գեղեցիկ էր , ամէն անդ նրան կ' մտքունէին , քանի որ «Գեղեցիկը ոչ մի տեղ պանդուխա չէ : Այս բոլորից աւելի եւ առաջ կար սակայն մի այլ պատճառ , որ Հերմանին յափշտակում էր . դա Դորոթէայի արտաքին զայլիկի գեղեցկութեան տակ ծածկում այս վսկեմ հոգին էր , որ վճա- րիքի յատկուում փայլող պամանփ պէս աչք էր զարնում եւ Հերմանին հրապուրում : Մէրը , իբր պափի խորժարդ , եթէ կուցք , այսափ

էլ կախուած չէ առարիների փորձառութեամբ հաստատած փաստելից . հազուարէս չին օրի- նակներ , որ ցոյց տան , թէ երկար ժամանա- կից ի վեր փրառու ծանօթ եղող մարդիկ իսկ , երբ ամուսնանում են , գժրացանան . Հերմանն առաջին հայեացքից հաստատապէս ճանաչում է աղջկայ նոգին եւ օրիում . կարծեն այդուեկ եւա Գեօթէն այն գալափարն է յարանում , թէ ըր- նութեան թելագրութ բնագրները բարերար են . Հերմանը համոցուած է , որ «ով երկար է խոր- համ մաւ , միշտ լաւը չէ ընտրում . » կամ թէ մի այլ տեղ . «Յաճախ միաբը թափանցելու անզօր է այնուեղ , ուր մի պարզ բնազդ հետուութեամբ կը գտնէր ձ մարփառ ուղին » :

Դառնանք այժմ այս պէտմայի հիւսուուծքին . շախագանցութիւն չը լինի ասել , որ համաշ- խարնաբն գրականութեան մէջ հազուագիւտ են այցալիք երկները . Բոլոր մասերը պէտք եղած չափով մէսակած է . եւ այդ բազորը կազմում են ամբողջութեան անքակունիք եւ անհրաժշտ մա- սը . Գոգուղութիւններն ու անսարանները . ու- րեմն ներքին եւ արտուքն պատակերները , ներ- գաշնակօրէն ծուլուած են : Ամառային շոքիք են , դաշտի վրայ ցըսուած է թշուոտ ամսութիւն Հերմանը գիւղացին պատահում է Գորոթէային՝ փայտը ձեռքին , սակէ վարելիս : Թնում է աղք- թիւն յատինելու փր մէրը , նրան տեսնում է զավ պարբերն մօս , ապիոր ձեռքում է Բառ- նասա՛ղն ուզուում է Հերմանի և Դորոթէայի պատները տրիգենելու : Նրանց հանգեցնում է լոււածաջու ըլուրի լանջին . Ուզում է նրանց սփ- որց փոթորիկն ու պանչան երդեկ , երկինքը մթնում է , չափերը շողում , փոթորիկը թթւ- ուում է : Այս վերջին կէտն ունի նաեւ նոգիա- նական այն արքեքը , որ ճնուները անսնելավ թէ Հերման այդ անկը քուցին գութում է , աւելի ընդունակ են զգացու նրա կորուսար . ուստի եւ երբ ներս է մանում յանկան գեղեցիկ զոյ- քը չիկնած ու բարձրահասակ , նրան եւս հիա- նում են , համաձայնուում են իրանց որդու ցան- կութեանը եւ այսպիսով հեշտանում է դրամայի հանգոյցի լուծումը , որ այնպէս զժուար էր սկզբում :

Գալով «Հերման եւ Դորոթէա յի ոճին եւ չափին , կարելի է ասել , որ Աստուածաշնչի ոճին չափ պարզ ու պատկերաւոր է , իսկ Հոմերոս

տաղաջափութեան մօտենալու յափ էլ ներդաշ-  
նակ է եւ սահուն . կոն այսպիս կտորներ .

« Երաց զլան իւր եւ ասէ » : Կամ ուրիշ  
տեղ . և Եւ պատասխանեց խելօք ու բարի պա-  
տասխն նորան » :

Եթէ Գեօթէն այս նիւթը գտնելիս ասաց ,  
թէ մարդ իւր կեանգում լոկ մի անգամ կարող  
է գտնել այդպիսի նիւթ , թող ներուի ինձ էլ  
ասել , որ մի անգամ կարելի է այդպէս մշակել ,  
այդ էլ :

« Հերման եւ Դորոթէա » յի ընթերցողն իսկոյն  
նկատում է , որ այդ գրում գործող մարդիկ  
բոլորն էլ առողջ միրնդի անգամներ են , ինե-  
լոք , զուարթ , ապկելու եւ աշխատելու ձգուու-  
մով լի : Այս տեսակէտից . Եթէ համեմատու-  
թիւն զնէնք « Վերթիրո » ի , « Ֆառուտա » ի եւ մեր  
պէմային մէջ , թիրեւս կարելի էր եղարկացնել ,  
որ մինչեւ « Վերթիրո » ը մեր կ'ոգեւորչ մեր  
որոշ կիւանդու վայրկեաններին , մինչզեռ « Յաւ-  
ուսատիք վիթիւարի խոյացունները բացառիկ ան-  
համեսէր են ըլրունիլ ամբողջովին , ընկակա-  
ռակը « Ազրուն եւ Դորոթէան կը սիրուի միշտ  
եւ ամէնքց իւրաքանչիւր մարդ կարող է մնծ  
բաւականութիւն սահանալ նոր ընթերցումից եւ  
ամէն մէկն իւր չափով . իսկ բոլորս միասին  
պարզօրէն կ'ըմբռնելք այս երկի մէկ ծալրից  
միւրը կարմիր թէլի նման անցնող այն գաղա-  
փարը , թէ սիրոյ ընտրութեան մէջ ամուսնու-  
ցողին է մնում իսպաս այս կամ այն էակի ճեռքը  
խնդրելը . դա սրտի մաղեկի է , հետեւարար  
սրտին պէտք է նետեւել . կողմանկի յանձնա-  
րարականները թոլորովին աւելորդ են . էրնէ՛կ  
ուժ սրտի պատգամին անխարժախ կը լինի :

Մի կէտ է մնում պարզելու : Ըստ իս , եթէ  
կայ՝ մի կոր , որ անյաջող է այս երկուու , դա  
նախերգանքն է , գոնէ դրս մնծ մասը . եթէ  
ընաւ էլ չի կցուի պօէմային , դրանով ոչնչ  
կորցրած չը լինի գործ :

Այդ նախերգանքում Գեօթէն իւր առաջ  
գրած մի շարք ոտանաւորների պէտ թշնամա-  
րար խօսող քննադատներին է ուղղում որոշ  
տողեր . այս գործի հետ կապ չունի զա . առանց  
կենսագրական կողմնակի ծանօթութիւնների  
անհամականի իսկ է , եւ , բայց այդ , առար-  
կայական այս սիրուն պօէմայի վճիտ հոսանքին  
մէջ զառնում է նիթակայական մի խոշնդոր .

Digitised by

կամ թէ Վոլֆը ի՞նչ է ցոյց տուել Հոմերի մա-  
սին , զա էլ մենց չի հետաքրքրում այս գէպ-  
քում . այդ միեւնային նախերգանքում Գեօթէն  
նեւունին կարծիքներին հակառակ լինեն իրոք թէ  
ակնարկելով՝ ասում է , որ ոչ մի անունից ինքը  
չի վախենում , ոչ մի զօգմա իրեն չի կաշկան-  
դում . թող ներուի ասել , որ Գեօթէն այնչափ  
կատարեալ համարուած հանձնան էլ թիրեւս  
ընթերցողին չարգիէ դիտելու , որ աւելորդ  
են նախերգանքի նաեւ այն կէտերը . ուր մու-  
սային է իրմուն ինչպէս հսկէս հսում . զուտ ոչալա-  
կան այսպիսի մի գործում անտեղի եւ կերծ են  
այդպիսի ձեւերը մեր ժամանակում : Խննիրորդ  
երգի սկսուածքումնէ դիմում է մուսային այն  
բովէին , եր երկու սովորական մահկանացու-  
նելերինին տեղը տուն են մտնելու , մարդիկ ,  
որոնց ճանաչուելու չափ կենդանութիւնը յան-  
կարծ , անսպասելի կերպով , աղարաւում է եւ  
մննիք իմանում ենք , որ սխալուած ենք , հէ-  
քեաթ էր պատմածը : Բարեբաղդաբար բացառիկ  
կէտեր են արանք « Հերման եւ Դորոթէա » յի  
նման մի անթառամ երկի մէջ :

Փարիզ . ՄԱՍԻՒՐԻ ՄԱՏԻՆՃԵԱՆ

(Հարունակելի)

## ԱԶԱՏ ՄՏԱՄՄԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆ

Ի ՀՐԱՄ

Սեպտեմբեր 20ին բացուեցաւ ի Հռոմ Ազատ  
Մտաման մնծ Համաժողովը , կազմակերպուած՝  
Ազատ Մտաման Միթազգային Դաշնակցութե-  
նէն , զոր հիմնած են , 1890 օգոստոս 20ին ,  
Պիւսնէր , Լիպանիսիթ , Հերակլիթ Սփենսէր ,  
Մոլիսքոթ , Կլեմանս Ռուայէտ , Զարլզ Պրետ-  
լուու , Տ. Մ. Պեննէր , Սեղար տը Փեր , Ռամն  
Քիէս : Այս համաժողովը տասներորդն է որ  
տեղի կ'ունենայ 1880էն ի վեր . բայց առաջին  
անգամն է որ նոյն իսկ այն քաղաքին մէջ ուր  
կը գահէ պապութիւնը , կաշկանդուած մոտ-  
ծումի միջնարերզը , ազատախոններու գումա-

A.R.A.R. @